ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 77-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտի 1-ին կարգի մասնագետ Էդգար Պետրոսյանի 2019 թվականի օգոստոսի 13-ի զեկուցագիրը /մուտք՝ 665/՝
որոշում եմ.

1.Բավարարել Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտի 1-ին կարգի մասնագետ Էդգար Պետրոսյանի զեկուցագիրը՝ <<Թումանյան համայնքի Թումանյան, Քարինջ, Մարց,Լորուտ,Շամուտ, Աթան և Ահնիձոր բնակավայրերի գիշերային լուսավորության բարելավման>> շինարարական աշխատանքների իրականացման վերաբերյալ և տալ շինարարության թույլտվություն:

2.Շինարարական աշխատանքները սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. թույլտվության առկայության դեպքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 78-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 14.08.2020 թվականի թիվ ՍՊ/23097-2020 և ՀՀ Լոռու մարզպետի 18.08.2020 թվականի թիվ 01/107.3.1/08609-2020 գրությունները՝ որոշում եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծած.1.2-1/ պաշտոնի անձնագիրը՝ համաձայն N1 հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2018թ. օգոստոսի 7-ի «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 90-Ա որոշման N1 հավելվածը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ